Գ. ԵՂԵՍԱՅԱՐԱՆՑ.

ԳԵԼԵԽ

Վոդեվիլ 1 արար.

Դինը 15 կոպեկ

ԵՐԵՒԱՆ
Տպարան «ԼՈՑՍ» Բէհբուդեան փող. № 12.
1914

891-99
L-37
9580
Літературний ф.
Вістник.

891.99
Ա-37

Գ. ԵՂԵԱԶԱՐԵԱՆՑ.

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՔԵԼԵԽ

Վոդեվիլ 1 արար.

Ֆ88Ա
Ա 274227

ԵՐԵՒԱՆ
Տպարան «ԼՈՅՍ» Բէհբուդեան փող. № 12,
1914

ԱՆՁԻՆՔ

ՔԱՂՑԱՇԵԱՆ, դերասան մօտ 30 տարեկան
ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՊԱՀԱՊԱՆ
ԱՐՍԵՆ, մօտ 50 տարեկան, ճաղատ գլխով
ԱՆԹԱՌԱՆ, Արսենի մայրը, մօտ 70 տարեկան
ԱՑՐԻ, փափախչի Գրիգորի, մօտ 25 տարեկան
ՏԻՐԱՑՈՒ
1. ՍԳԻՈՐ
2. ՍԳԻՈՐ
ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ



1. Դարբասը, 2. Շուշանի գերեզմանը, 3. Փափախչի Գրիգորի գերեզմանը, 4 և 5 մահարձաններ o ծառներ, a b—երկինք, c d—ցանկապատ։

Բեմը գերեզմանատուն է ներկայացնում։

ՏԵՍԻԼ 1.

ՊԱՀԱՊԱՆ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

(Գերեզմանափորը բահը ձեռքին աշխատում է գերեզմանի վերայ, մտնում է աջից պահապանը)

ՊԱՀ.—Շտապիր, բարեկամ. շուտով կ'գան մեռելատէրերը։

ԳԵՐԵԶՄ.—Ամեն ինչ կարգին է, պարոն պահապան։ Այնպէս չանք եմ գործ դրել, որ յոյս ունիմ գոհ պիտի մնաք ինձնից։ (աշխատում է։)

ՊԱՀ.—Այդ ես տեսնում եմ, որ դու լաւ աշխատաւոր ես, ուստի իմ յարգելի մեռելների կողմից՝ յայտնում եմ խորին շնորհակալութիւնս։

ԳԵՐԵԶՄ.—Դուք ինձ ներեցէք, պարոն պահապան, սակայն ինձ մի բան զարմացնում է. դուք ապրում էք գերեզմանատանը, ամեն օր, համարեա, մեռելներ էք տեսնում և փոխանակ տխրելու, դուք միշտ տրամադիր էք կատակներ անել։

ՊԱՀ.—Դա հենց նրանից է, որ ես շարունակ մեռելների հետ գործ ունեմ, որքան շատ մահ ես տեսնում, այնքան շատ զգում ես կեանքի ունայնութիւնը։ Դու տես, թէ ինչպէս ան-

տարբեր են տէրտէրները, դէպի այն ամենը, ինչ որ իրենց չի վերաբերում։ (պատուզա)։ Մախլաս... է, չ'վերջացրիր։

ԳԵՐԵԶՄ. —Այո, պատրաստ է։

ՊԱՇ.—Դէ, վերցուր գործիքներդ գնանք, այն կողմումն էլ գործ կայ անելու։ (ցոյց է տալիս բեմի խորքը, ուր գնում են երկուսով)։

ՏԵՍԻԼ 2.

ՔԱՂՑԱԾԵԱՆ

ՔԱՂ.—(Մտնելով դարբասից) Ահա և գերեզմանատուն... Այսքան տարի ծառայիր ազգին, աշխատիր բեմի վերայ, որպէս զի վերջ ի վերջոյ քաղցած փորով, քո սեփական ոտքերով գաս գերեզմանատուն մեռնելու... Ահա քեզ և վարձատրութիւն... Սուտ չէ ասած, որ մարդիկ չեն կարող գնահատել հանճարներին։ Այո, դու տգէտ ամբոխ, խուլ են քո ականջները, փակ են քո հոգու աչքերը, որ դու չը տեսար իմ արժանիքները և չը գնահատեցիր այդ։ Կը գայ ժամանակ, երբ դու ուշքի կը գաս, կը հասկանաս կատարած յանցանքդ, բայց, աւաղ, ուշ կը լինի.— դերասան Քաղցածեանը փթած կը լինի հողի տակ։ Դու այն ժամանակ կը սգաս, կ'ողբաս, կը գաս շիրիմիս երկրպագելու, դափնիներով ու անթառամ ծաղիկներով.—դու կասես, ամենք որ-

քան մեղաւոր ենք քո դէմ, ով անմահ դերեաս սան. վեր կաց քո տեղից, մենք այլ ևս չենք թողնի, որ դու մեռնես քաղցից. այ, տես, բերել ենք քեզ համար քուվթայ ու շիլայ, խնձորով տօլմայ, կարմիր գինի, թթու դրած խիար, գառան մսից խորոված, հետն էլ սև բադրջան ու պամիդոր։ Օ՜յ, ծյ, ծյ. (բռնում է փորը) կերակուրների անուն տուեցի աւելի սաստկացաւ փորիս ցաւը։ Ա՜յ, դու, անպիտան փոր. տես ինչպէս էլ ղրղրում է. սպասիր, սպասիր, մի վայրկեան ևս և դու կը լռես յաւիտեան։ (հանում է գրպանից հեղուկով լի փոքրիկ սրուակ) Ահա, քո վերջին կերակուրը, սա քեզ կը կշտացնի յաւիտեան։ Դէհ, մնաս բարով աշխարհ, մնաս բարով և դու անպիտան քաղցածութիւն, անկոչ և անբաժան իմ ընկեր։ (բարձրացնելով ձայնը) Եկէք և փորէք իմ գերեզմանը։ Է՜յ, ով կայ այդտեղ։ (բեմի խորքից մօտենում է գերեզմանափորը) Ա՜յ, հենց այստեղ... դէհ, շուտով փորեցէք գերեզմանս։

ՏԵՍԻԼ 3.

ՔԱՂՑԱԾԵԱՆ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ.

ԳԵՐԵԶՄ.—Հրամայեցէք, պարոն։

ՔԱՂ.—(սթափւելով) Հ՜ը, ինչ ես ուզում, ով ես դու։

ԳԵՐԵԶՄ.—Ես գերեզմանափոր եմ։ Դուք

կարծեմ ուզում էք գերեզման փորել տալ ձեր մեռելի համար։

ՔԱՂ.— (կողմը) Իմ մեռելի համար։ Սա ինձ արդէն մեռած է հաշուում։ (նրան) Այո՛, այո՛, փորիր։

ԳԵՐԵԶՄ.—Իսկ դուք, պարոն, պահապանին յայտնել էք դրա մասին։

ՔԱՂ.—Մի՞թէ, առանց պահապանին հարցնելու մեռնել չի՞ կարելի։

ԳԵՐԵԶՄ.—Ո՛չ, մեռնելու մասին չէ խօսքս, այլ գերեզման փորելու։ Այստեղ այսպէս է ընդունուած։ Կամենաք ես ձայն կը տամ նրան։ (բարձր) Պարոն պահապան, պարոն պահապան, այստեղ եկէք։ (նրան) Ես մի հասարակ աշխատաւոր եմ և առանց նրա կարգադրութեան ոչինչ իրաւունք չունեմ անելու։

ՔԱՂ.— (կողմը) Տեսնենք, թէ պարոն պահապանը որտեղ կը հրամայի մեզ թաղել։

ԳԵՐԵԶՄ.—Ի՞նչ հասակի է ձեր մեռելը։

ՔԱՂ.—Ճիշտ իմ հասակիս։ (լալիս է)

ԳԵՐԵԶՄ.—Կի՞ն է, թէ տղամարդ։

ՔԱՂ.—Տղամարդ, այն էլ ինչպիսի տղամարդ։ (լալիս է)։

ԳԵՐԵԶՄ.—Ահա, և նա։

ՏԵՍԻԼ 4.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊԱՀԱՊԱՆ

ՊԱՀ.—Բարև ձեզ։

ՔԱՂ.—Մնաք բարով։

ՊԱՀ.—(զարմացած նայում է Քաղցածեանին եւ ապա հարցնում) Գերեզմանն էք ուզում փորել տալ։

ԳԵՐԵԶՄ.—Այո՛ այս, պարոնի համար մեծ տեսակի գերեզման է հարկաւոր։

ՊԱՀ.—Շատ լաւ, շատ լաւ, շատ ուրախ եմ։

ՔԱՂ.—Ինչի՞ն էք այդպէս ուրախանում, որ ինձ գերեզմանն է հարկաւոր։ Ես ձեզ ի՞նչ վատ բան եմ արել։

ՊԱՀ.—Ո՛չ, դուք ինձ վատ բան չէք արել, ես ուրախ եմ, որ կարող եմ ձեզ օգտակար լինել։

ՔԱՂ.—Ասենք այդ մէկը ճիշտ է, դուք ինձ մեծ օգնութիւն արած կը լինէք։

ՊԱՀ.—Թոյլ տուէք հարցնել, ի՞նչ հիւանդութիւնից է մեռել ձեր ննջեցեալը։

ՔԱՂ.—Մի շատ տգեղ հիւանդութիւնից, այնքան տգեղ, որ ես անունը տալ անգամ չեմ ուզում։

ՊԱՀ.—Ներեցէք, բայց այդ դուք պարտաւոր էք ասելու... մի գուցէ, նա վարակիչ հիւանդութիւնից է մեռել, այդ դէպքում, ես չեմ կարող թոյլ տալ թաղել նրան ընդհանուր գերեզմանատանը։

ՔԱՂ.—Եթէ այդպէս ցանկանում էք, համեցէք —նա մեռել է, կամ, աւելի ճիշտն ասած, պիտի մեռնի... ինչպէս ձեզ ասեմ... հա, փորի

դաղարկութիւնից։

ԳԵՐԵԶՄ.—Փորի դաղարկութիւնից։

ՊԱՀ.—Այդ ինչ տեսակի հիւանդութիւն է եղել. ինչից է յառաջանում դա։

ԲԱՂ.—Գլխաւորապէս, չուտելուց։

ՊԱՀ.—Մեռելը տանն է, թէ եկեղեցում։

ԲԱՂ.—Ոչ, նա այստեղ է։

ՊԱՀ.—Այստեղ է. այդ ճրբ էք բերել, որ ես չեմ տեսել։

ԲԱՂ.—Նրան չեն բերել. նա ինքն է եկել։

ՊԱՀ.—Ինչպէս թէ ինքն է եկել. մի՞թէ մեռելը կարող է գալ։

ԲԱՂ.—Նա դեռ կենդանի է. եկել է այստեղ մեռնելու։ Նա սպասում է միայն գերեզմանը պատրաստ լինելուն։ (լալով) Խեղճ Բաղցածեան։ Ա՜յ, անպիտան փոր... (պահապանին) Դէ՛հ, բարեկամ, պատուիրիր շուտով գերեզմանը պատրաստեն. ես այլևս ուժ չունեմ դիմանալու։ (լալիս է)։

ՊԱՀ.—Շատ էլ մէք վշտանայ, պարոն, ինչ արած, Աստուծոյ կամքն է։ Ժամանակի ընթացքում կը մոռանաք։

ԲԱՂ.—Ո՛չ, ես իսկոյն կը մոռանամ։ (լալիս է)։

ՊԱՀ.— (կողմը) Զարմանալի բան, այսպէս աղի արտասունքով լալիս է, այսպէս վշտանում է և իսկոյն պիտի մոռանայ։ (նրան) Ասացէք խնդրեմ, պարոն, ձեր ինչն է այդ մեռնողը։

ՔԱՂ.—Իմ ամենամօտ մարդը, աշխարհիս երեսին։ (երկար լալիս է)։ Այնքան մօտ, որ իմ և նրա մէջ ոչ մի տարաձութիւն չկայ։

ՊԱՀ.—(կողմը) Ո՛չ, կատարեալ խենթ է այս մարդը։ (գերեզմանափորին) Ինչ արած, փորիր գերեզմանը։ Ես շուտով կը վերադառնամ։ (գնում է)։

ՏԵՍԻԼ 5.

ՔԱՂՑԱԾԵԱՆ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

ԳԵՐԵԶՄ.—Թոյլ տուէք չափել ձեր բոյը։

ՔԱՂ.—Չափեցէք։ (գերեզմ. չափում է, իսկ Քաղցածեանը դառն լալիս է։ Գերեզմ. սկսում է փորել)։

ՔԱՂ.—(մէկուսի) Ահա և նոր բնակարան... բնակարան, որը ոչ մի հարմարութիւն, բացի տեղաւորուելուց նրա մէջ չի պահանջում.—ոչ մահճակալ, ոչ սեղան, ոչ աթոռներ, ոչ դուռ, ոչ պատուհան, ոչ խոհանոց, ոչ էլ կերակուրներ... այ, այ, այ, դարձեալ կերակուրների անուններ լսեց։ Անիծուես դու փոր. ագահութեամբդ ինձ մինչև գերեզման հասցրիր։ Համբերիր, գոնէ, մինչև պատրաստեն։ (պառկում) Ոչ տաքացնել է հարկաւոր, ոչ լուսաւորել, իսկ ամենագլխաւորը, որ բնակարանի վարձ չկայ. էլ չես լսելու տանտիրոջ անպիտան ձայնը.—«պարոն Քաղցածեան, կարելի՞ է ներս գալ». համեցէք։ «Պարոն Քաղցածեան ամիսը վաղուց լրացել է, իսկ դուք բնակարանի վարձը դեռ չէք

տուել, բարի եղէք»... (ձայնը մեղմացնելով) Ցարգելի խազեային... ես... ըը՞ը... մի փոքր էլ... այլևս ես չեմ խեղճանայ նրա առաջ. հիմայ ես ինքս եմ տան տէրը։ (պաուզա) Ինչ լաւ կը լինէր, եթէ մարդ կենդանութեան ժամանակ ունենար այս բոլոր հարմարութիւնները։ Իսկապէս, ինչ հրաշալի բան կը լինէր.—ոչ տաք կը զգայիր, ոչ ցուրտ. ոչ լոյս կը տեսնէիր, ոչ էլ խաւար. ոչ ուտել կուզենայիր, ոչ էլ... այ, դու անպիտան փոր. ես որ ամբողջ 6 օր է համբերում եմ, դու մի կէս ժամ չես կարող համբերել։ Իսկապէս, ինչ հրաշալի բան կը լինէր.—ոչ փողի կարիք կը զգայիր, ոչ էլ աշխատանքի. կապրէիր ապատ թռչունի պէս.—որտեղ կուզէիր, այնտեղ էլ բնակութիւն կ'հաստատէիր։ Բայց ափսոս, որ չի լինում. նախ պիտի մեռնես և ապա ստանաս այս բոլոր հարմարութիւնները... (մտնում է պահապանը) Ափսոս ես, ափսոս իմ հանճարը... (պահապանին) Դու գիտե՞ս, ինչ ասել է հանճար։

ՏԵՍԻԼ 6.

ՆՈՑՆՔ ԵՒ ՊԱՀԱՊԱՆ

ՊԱՀ.—Ը՞ը... մօտաւորապէս։

ՔԱՂ.—Հէնց ցաւն էլ դորանումն է, որ մօտաւորապէս գիտես. իսկ եթէ դուք իմանայիք, թէ ինչ է հանճարը, ես այսօր չ'պիտի մեռնէի քաղցից։

ՊԱՀ.—Ինչպէս, ուրեմն դուք էք այդ մեռնողը։

ԲԱՂ.—Այո՛, ես, յայտնի դերասան Քաղցածեանը, որը 3 տարի ի վեր ծառայած է ազգային բեմի վերայ և այդ ծառայութեան հատուցումը եղաւ, որ ես այսօր փորս մէջքիս կպած, պիտի հողը մտնեմ։

ՊԱՀ.—Ցաւալի է, շատ ցաւալի է այդպէս երիտասարդ հասակում մեռնել։ Բայց, մի՞թէ, այդ երեք տարուայ ընթացքում դուք չ'նկատեցիք, որ դերասանութիւնը այդպիսի մի հիւանդութիւն է յառաջացնում ձեր մէջ և ժամանակին թողնէիք բեմը։

ԲԱՂ.—Առաջ այնքան յաճախ չէր լինում այդ հիւանդութիւնը. լինելուս էլ տևում էր 2, 3, շատ—շատ 4 օր։ Հիմայ, ահա, 6-երորդ օրն է, ինչ ոչինչ չեմ կերած։

ՊԱՀ.—Ես առաջին անգամն եմ լսում, որ դերասանութիւնը կարող է փակել մարդու ախորժակը այնպէս, որ նա մինչև անգամ մեռնի քաղցից։ Ես ընդհակառակը գիտէի, որ դերասանները շատ լաւ ախորժակ ունեն և փառաւորապէս ուտել գիտեն։

ԲԱՂ.—Ա՜յ, ա՛յ, ա՛յ...

ՊԱՀ.—Ի՞նչ պատահեց ձեզ։

ԲԱՂ.—Ո՛չինչ, շարունակեցէք խնդրեմ, միայն թէ ուտել բառը մէջ գործածի։

ՊԱՀ.—(կողմը) Այս ինչ՞ զարմանալի հիանդութիւն է եղել։ (Նրան) Ես մէկ դերասան գիտէի, որը յաճախ, երբ գործ չէր ունենում բեմի վերայ և, հետևաբար, քաղցած էր մնում, գալիս էր գերեզմանատուն դամբանականներ ասելու։ Նրան շատ սիրով ընդունում էին և քելեխով հիւրասիրում. և դուք չէք կարող երևակայել, թէ ինչպիսի ախորժակով նա ուտում էր... այ, նեբեցէք, խռլափում էր. այնպիսի ախորժակով, որ ոչ ոք նրա հետ մրցել չէր կարող։

ԲԱՂ.—Ա՜յ, հրաշալի միտք, սքանչելի գիւտ...

ՊԱՀ.—Իսկապէս, շատ խելացին էր։ Մէկ անգամ էլ...

ԲԱՂ.—(մէկուսի) Ինչ սրամտութիւն. դամբանական, հա... (Նրան) Սպասեցէք, բայց չէ որ դամբանական խօսելու համար, պիտի ծանօթ լինել մեռելին, նրա անցեալին, իմանալ նրա ով լինելը...

ՊԱՀ.—Հարկաւ. նա վաղօրօք ժողովում էր այդ տեղեկութիւնները։

ԲԱՂ.—Իսկ... քելեխ ուտելը յաճախ է լինում այստեղ։

ՊԱՀ.—Համարեա թէ, ամեն օր։

ԲԱՂ.—Իսկ այսօր կ'լինի քելեխ։

ՊԱՀ.—Ա՛յ, հէնց այսօր պիտի կատարեն այս մեռելի եօթը. երևի շուտով կ'գան նրա ազգականները։

ՔԱՂ.—Քելեխ էլ կ'լինի չէ։

ՊԱՀ.—Անշուշտ։

ՔԱՂ.—Ասացէք խնդրեմ, եթէ ես դամբանական խօսեմ, ինձ էլ կը հիւրասիրեն քելեխով։

ՊԱՀ.—Անկասկած։ Բայց ձեր ինչին է պէտք քելեխը, քանի որ դուք ուտել չէք կարող։

ՔԱՂ.—Եւ ինչու չ'պիտի կարողանամ։

ՊԱՀ.—Զէ՞ որ, դուք ինքներդ ասացիք քիչ առաջ, որ այդպիսի մի հիւանդութիւն ունէք։

ՔԱՂ.—Այո, ունեմ, քանի որ ուտելու բան չկայ, բայց դուք ինձ ուտելիք տուէք և կը տեսնէք, թէ ես ինչպէս կուտեմ։ Երդւում եմ ես իմ այս դաղարկ փորովս. այ, տեսէք, ինքն էլ վկայում է.—ինչպէս սկսեց ղրղրալ, որ ամենքին զարմացնեմ։

ՊԱՀ.—Հիմայ ես հասկացայ ձեր հիւանդութիւնը։

ՔԱՂ.—Դուք չէք կարող ինձ մի փոքր տեղեկութիւններ տալ այդ մեռելի մասին։

ՊԱՀ.—Ինչու չէ, համեցէք։ Սա փափախչի Գրիգորի գերեզմանն է, որին եօթ օր սրանից առաջ թաղեցին։

ՔԱՂ.—Փափախչի Գրիգոր... Հ՞ը։ Քանի՞ տարեկան էր նա։

ՊԱՀ.—Մօտ քառասուն։

ՔԱՂ.—Մի՞ջին հասակ։ Կարելի է անուանել և ջահել հասակ.—ես դորանից մի բան չեմ կորո-

ցնի. ընդհակառակը շահած կը լինեմ, եթէ ասեմ ծաղիկ հասակում մեռաւ։ Դուք ինչպէս էք կարծում։

ՊԱՀ.—Հարկաւ, լաւ կը լինի։

ՔԱՂ.—Այդպէս ուրեմն.—Նա մեռաւ... Ո՛չ, ուղղակի,—մեռաւ ծաղիկ հասակում իմ անմոռաց, իմ թանգագին ընկեր փափախչի Գրիգորը և թողեց... սակայն ինչ։ Դուք չ՚գիտէք, թէ նա ինչ թողեց.

ՊԱՀ.—Այրին է մնացել նրանից յետոյ, իսկ ուրիշ ինչ է թողել, չը գիտեմ։

ՔԱՂ.—Ուրեմն.—և թողեց, մի գեղեցիկ, մի աննման այրի. իսկ, եթէ յանկարծ նրա այրին տգեղ լինի և վիրաւորուի։

ՊԱՀ.—Կարող է պատահել։ Իմ կարծիքով աւելի լաւ կը լինի, որ դուք այրուն թողնէք հանգիստ և խօսէք միմիայն մեռելի մասին։

ՔԱՂ.—Դուք իրաւացի էք։ Ուրեմն, նորից, փոխենք ձևը։—Նա մեռաւ։ (պաուզա) Ահա, նրա գերեզմանը։ (պաուզա) Նա ուզում էր ապրի (պաուզա), բայց մեռաւ։

ՊԱՀ.—Դուք լաւ կանէք, եթէ մի քանի հատ խրթին բառեր արտասանէք. դա կուժեղացնի տպաւորութիւնը։ Դուք դերասաններդ գիտէք այդպիսի բառեր։

ՔԱՂ.—Այո՛, այո՛, շատ խելացի է ձեր ասածը։ Օրինակ (երկար մտածելուց յետոյ) բուտաֆոֆ-

ըիա, կամ ամպլրուա. հա, այդպէս ուրեմն.—նա մեռաւ և...

ՊԱՀ.—Ահա գալիս են.—փափախչի Գրիգորի այրին է տիրացուի հետ։

ՔՅՂ.—Ափսոս որ շուտ եկան, ես ժամանակ չեմ ունենալու ճառս պատրաստել։

ՊԱՀ.—Իսկ ինձ թուում է, որ դուք կը հասցնէք, որովհետև, մինչև բոլոր ազգականները կը ժողովեն, բաւականին ժամանակ կ'անցնի։ Եկէք գնանք իմ բնակարանս.—այստեղ է՝ գերեզմանատանը, այնտեղ կը պատրաստէք ձեր ճառը։

ՔԱՂ.—Գնանք իմ փրկիչս։ (գերեզմանափորին) Է՛յ, բարեկամ, թող փորելը, ինձ էլ առայժմս գերեզման հարկաւոր չէ։ (գնում են)։

ՏԵՍԻԼ 7.

ԱՑՐԻ ԵՒ ՏԻՐԱՑՈՒ.

ԱՑՐԻ—(Մօտենալով 3 գերեզմանին) Ահա տիրացու, իմ անբաղտ ամուսին Գրիգորի գերեզմանը։ Գնաց այս աշխարհից, թողեց ինձ անտէր, անտիրական։ (լալիս է)։

ՏԻՐԱՑ.—Մենք ամենքս էլ մահկանացու ենք քոյրիկս, մենք ամենքս էլ մի գեղեցիկ օր պիտի թողնենք այս ունայն աշխարհը և գնանք ապրելու յաւիտենական կեանքով։ Աստուած նրա հոգին լուսաւորէ. ամէն։

ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՑՐԻ—Ամէն։ Տիրացու, թէև Գրիգորիս եօթը այսօր է, բայց քելեխի պատրաստութիւն չը կարողացայ տեսնել. երեխաներս հիւանդ են. շուտով տուն պիտի վերադառնամ։ 2—3 օրից յետոյ կանեմ քելեխը։ Ես կ'իմացնեմ ժամանակին. այդպէս էլ կասես տէրտէրին։

ՏԻՐԱՑ.—Գլուխդ ողջ լինի, քոյրիկս, երեք օրից յետոյ թող լինի. միայն թէ պարտքդ կատարած լինես և մեզ հոգևորականներիս չը մոռանաս։ Աստուած չի բարկանայ։ Մնաս խաղաղութեամբ։ (Գնում է։ Այրին խունկ է ծխում։ Քիչ յետոյ)։

ՏԵՍԻԼ 8.

ԱՐՍԷՆ, ԱՆԹԱՌԱՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՍԳԻՈՐՆԵՐ.

ԱՐՍ.—(Մօտենալով Զուշանի գերեզմանին) Ա՜խ. Շուշան ջան, ա՜խ կնիկ ջան, ա՜խ...

ԱՆԹ.—Վա՜յ իմ ջահել, ջիւան հարսի ջան վա՜յ...

1 և 2 ՍԳԻՈՐ.—Վա՜յ մեր Շան, վա՜յ։

ԱՐՍ.—Դու ինչպէս ինձ թողիր ու գնացիր, իմ հրեշտակ, իմ հաւատարիմ կնիկ ջան. վա՜յ, վա՜յ, վա՜յ...

ԱՆԹ.—(Երգելով) Լացիր բալաս, լացիր վայ կանչելով. գնաց օղլուշաղդ, քանդուեց տունդ, մի զաւակ էլ չը թողեց քեզ մխիթարանք օր մեծութեան, իմ բալես, վա՜յ...

ԱՑՐԻ—(Երգում է նոյն եղանակով) Դաղգեահի ա-

ռաջին նստած, ոտքերդ տակիդ ծալած, մօրթին առաջիդ փռած, մկրատը ձեռքդ առած, չափում էիր ու ձևում, ձևում ու կտրում, կտրում ու կարում մեծ ու պստիկ փափախներ, Գրիգոր Ջան, վայ...

ԱՆԹ.—(Երգելով) Եան պօշակին նստած, մլերը ձեռքդ առած, թելը մատիդ փաթաթած գործում էիր հատիկ, հատիկ, մեծ ու պստիկ չուլքիներ, Շուշան Ջան, վայ...

ԱՑՐԻ—(Եռանդով) Կարածդ փափախներին մեռնեմ, Գրիգոր Ջան, վայ ..

ԱՆԹ.—(Նոյնպէս եռանդով) Գործածդ չուլքիներին մեռնեմ, Շուշան Ջան, վայ...

1 ՍԳԻՈՐ—Հերիք լաց լինես, Անթառան խնամի, լացով նրան չես կենդանացնի. ինչ արած, Աստուծոյ կամքն է. նրա ճակատին էլ այդ էր գրած։

2 ՍԳԻՈՐ—Բերէք խունկ ծխենք, ողորմաթասը խմենք. թող Շուշանի մարմինը գերեզմանում հանգստանայ, հոգին էլ արքայութեան մէջ։ (Խունկ են ծխում. 1 սգւորը բերում է դինի)։

ԱՑՐԻ—(Համբուրում է գերեզմանը եւ ոտքի կանգնում) Դէհ, մնաս բարով Գրիգոր Ջան. մի բարկանայ, մէկ էլ գալուս քելեխ կանեմ։ (ուզում է գնալ)

1 ՍԳԻՈՐ—(Լցնելով Ղասը գինով) Ա՛ռ, Արսէն, խմի ողորմաթասը։

ԱՐՍ.—Աստուած ողորմի Շուշանի հոգուն։ (Խմում է)

ԱՆԹ.—(այրուն) Քոյրիկ, համեցէք մի ողորմաթաս էլ դուք խմէք։

ԱՑՐԻ—(մօտենալով) Ո՞վ է ձեր մեռելը։

ԱՆԹ.—Իմ հարսս, Շուշան անունով։ Երեք տարուայ պսակուած էր։

1 ՍԳԻՈՐ—(գինով Թասը տալիս է այրուն)

ԱՑՐԻ—Է՜հ... փուչ աշխարհ... Ասուած հոգին լուսաւորի։ (խմում է)

ԱՆԹ.—Ձեր մեռելը ով է։

ԱՑՐԻ—Իմն էլ մարդս է։ Փափախչի Գրիգորը. գուցէ ճանաչես։

ԱՆԹ.—Չէ, (1 սգւորին) Աղջի գինի լցրու. մէկմէկ էլ խմենք փափախչի Գրիգորի ողորմաթասը։ (Հերթով, ողորմի փափախչի Գրիգորի հոգուն ասելով, խմում են։ Մտնում է Քաղցածեանը)։

ՏԵՍԻԼ 8.

ՆՈՑՆՔ ԵՒ ՔԱՂՑԱԾԵԱՆ

ՔԱՂ.—(Կողմը) Ա՞յս ինչ է. եթէ չեմ սխալուում, պահապանը այս գերեզմանի համար ասեց, իսկ նրանք այնտեղ են ժողոված. (պառզա) ինչպէս երևի պահապանը սխալուել է։ (բարձր) Թողէք, թողէք ես մօտ գամ։ (առաջ գալով, կանգնում է Շուշանի գերեզմանի դլխին) Ահա և նա։ (պառզա) Մեռաւ։ (պառզա) Նա ծնուեց, լոյս աշխարհ եկաւ, ուզում էր ապրի... նա մեռաւ։ (պառզա) Նա մեռաւ ծաղիկ հասակում, կոկոն հասակում, դեռ չը բաց-

ւած հասակում...

ԱՆԹ. և ԱՐՍ.—(լալով) Վարդի կոկոն էր վա՜յ, վա՜ւյ, վա՜ւյ...

ՔԱՂ.—(կողմը) Սկիզբը լաւ էր։ Սգդեց։ (Արսինին) Սիրտս սաստիկ բաբախում է. մի թաս գինի, եթէ կարելի է։ (բռնում է փորը)

ԱՐՍ.—(1 սգւորին) Գինի լցրու։

1 ՍԳԻՈՐ—(Լցնելով թասը, տալիս է Քաղցածեանին)։

ԱՐՍ.—Առ բարեկամ, ողորմի հոգուն ասայ և խմի։

ՔԱՂ.—Ողորմի քեզ. Աստուած հոգիդ լուսաւորէ։ (խմում է եւ շարունակում)—Նա ուզում էր ապրել, ուզում էր գործել...

ԱՆԹ.—Վա՜յ, ղուրբան լինեմ ես նրա մատներին. այնպէս լաւ գործում էր. լաւ, լաւ չուլքիք, դֆտգէ շալեր. վա՜ւյ, վա՜ւյ...

ՔԱՂ.—(կողմը) Ինչեր է ասում. չէ, ինչպէս երևի խանգարւել է խեղճի յիշողութիւնը։ (շարունակում է)—Դուք ուզում էք ասել, որ նա մեռաւ, իսկ ես կասեմ, ոչ, նա չի մեռէ։ Նա մեռել է, գուցէ նրանց համար, ովքեր նրան չեն ճանաչում, իսկ մեզ համար նա կենդանի է և կապրի մեր սրտերում, քանի որ նրանք բաբախում են։

ԱՐՍ.—Դուք նրան ճանաչում էիք։

ՔԱՂ.—Ինչպէս չէ, նոյնիսկ շատ լաւ։ (կողմը) Մեծ սուտ ասեցի։ (շարունակում է) Նա սովորական վարպետներից չէր, այլ կատարեալ գեղար-

ւեստագէտ։ Նա գնաց, թողնելով այս փուչ աշխարհին, իր բոլոր բեկուիզի...տը։

ԱՆԹ.—Ձեր տունն էլ վիզիթով լկել էր, հա։ Վ.ալ ես նրա արած վիզիթներին մեռնեմ։

ԲԱՂ. Ես ասում եմ բեկուիզիտ։

ԱՆԹ.—Հա՛, դուրբան լինեմ քեզ, հասկացայ, երեք վիզիթ։

ԲԱՂ.—(կողմը) Թէև սխալ հասկացաւ, բայց ինչաս չունի։ (շարունակում է) Նրա անպլուան սէրն էր։

ԱՆԹ.—(1 սգւորին) Այդ ի՞նչ ասեց. չը հասկացայ։

ԲԱՂ.—Եւ նա շարունակ իր ամպլուայի մէջն էր։

1 ՍԳԻՈՐ—(Անթառանին) Երևի այն մօդնի դէյրի մասին է ասում.—առաջը բաց։

ԱՆԹ.—Տանգօ ֆասօնը։

ԲԱՂ.—Անցան այն երջանիկ, այն բաղդաւոր օրերը, երբ մենք միասին, երկու մտերիմ սրտեր...

ԱՐՍ.—(կողմը) Մտերիմ սրտեր...

ԲԱՂ.—Թէև շատ ժամանակ իրարից հեռու, բայց հոգւով միշտ միասին, ապրում էինք, ինչպէս մի հոգի և մի մարմին։

ԱՐՍ.—Այս ի՞նչ նորութիւններ եմ լսում ես։

ԲԱՂ.—Աբա՛, դուք ի՞նչ էիք կարծում։ (շարունակում է) Նա մեռաւ. և ինչո՞ւ։ Էլ ո՞վ ինձ ան-

բաղդիս պիտի սիրէ։

ԱՆԹ.—Վա՛յ, քոռանամ ես։

ԱՐՍ.—(կողմը) Իմ կինս սիրելիս է եղել սրան։ Ահա թէ ինչ. ես այդ չը գիտէի։

ՔԱՂ.—Վշտի ժամերում, էլ ո՞ւմ գրկում ես պիտի...

ԱՐՍ.—(զարմացած) Գրկո՞ւմ։

ՔԱՂ.—Այո՛, գրկում։

ԱՐՍ.—(կողմը) Սուս կացէք, որ բռնել եմ գողին։ (նրան) Այդ լաւ է, որ դուք ձեր սեփական ոտքերովն էք եկել։

ՔԱՂ.—Այո՛, իմ սեփական ոտքերովս։

ԱՐՍ.—(ոտից գլուխ զննում է Քաղցածեանին)։

1 ՍԳԻՈՐ—(2 սղւորին) Աղջի, մի լաւ նայի դրան։ Ա՛յ, կտրուէը ճաշակդ, կնիկ. մարդ էլ այդպէս կապիկին սիրեկան կանի՞։ (զննում է Քաղցածեանին)։

2 ՍԳԻՈՐ.—(կոտրատելով) Նա ինչ ճաշակ ունէը որ... не удивительно (նոյնպէս զննում է)։

ԱՑՐԻ—(կողմը) Այսպէս էլ անամօթ։ Մեծ դալաթները է արել, դեռ եկել պարծենում է։ (զարմացած նայում է Քաղցածեանին)։

ՔԱՂ.—(կողմը) Իոլորն էլ զարմացած են։ Տպաւորութիւնը ուժեղ է։ Շարունակենք։ (ոգեւորուած) Նա մեռաւ... Չկայ այլևս այն անձը, որը շատերին սիրեց...

ԱՐՍ.—(ապշած) Շատերի՞ն նոյնիսկ։

ՔԱՂ.—Այո՛, շատ շատերին։

ԱՐՍ.—Ո՞հ... սպանեցէք ինձ։

ՔԱՂ.—Հանդարտուէք, զինուէք համբերութեամբ։ Դուք դեռ շատ բաներ ունէք լսելու։ (Շարունակում է) Այո՛, ապերախտ են մարդիկ։ Ո՞ւր են այն սողունները։ Ինչո՞ւ չեն եկել վերջին հրաժեշտը տալու իրենց սիրեկանին։

ԱՆԹ.—Ա՜յ...

ԱՐՍ.—(կատաղած) Լռի՛ր...

ՔԱՂ.—(ոգեւորուած) Ո՛չ, ես չեմ կարող լռել։ Ես պիտի պոռամ, ես պիտի աղաղակեմ, որ ողջ աշխարհը իմանայ նրա հերոսութիւնները։

ԱՐՍ.—Սի՛րտս, սի՛րտս։ (Թուլանում է։ Անթառանը եւ այրին օգնութեան են գալիս)։

ԱՑՐԻ—Ջո՛ւր, ջո՛ւր...

1 ՍԳԻՈՐ—(ջուր տալով Անթառանին, դառնում է 2 սգւորին) Հո լսեցի՞ր։

2 ՍԳԻՈՐ—Ես միշտ էլ ասել եմ որ նա մարմանդ ջուր է։

ԱՆԹ.—Տէր Աստուած, այս ինչ օրին էր եկաւ մեր գլխին։

ՔԱՂ.—(ոգեւորուած) Օրի՞ն... սա օրին չէ, այլ ողբերգութիւն։ Շեքսպիրի, Շիլլերի ողբերգութիւնների նման մի ողբերգութիւն։

ԱՆԹ.—Դու դեռ շարունակո՞ւմ ես։

ՔԱՂ.—Աբա, ինչի՞ համար եմ եկել ես այստեղ. կարծում էք միմիայն քելեխ ուտելո՞ւ։

ԱՆԹ.—Ա՜յ, հօրս ցաւը ուտես, ա՛յ, ոտդ կոտրուէր չը գայիր այստեղ։ Կորի՛, թէ չէ...

ԱՐՍ.—(ուշքի գալով) Թող, որ նա պատմէ։ Ես ուզում եմ բոլորը իմանալ։

ՔԱՂ.—Այո, պէտք է իմանալ. (շարունակում է) Մեռաւ այն սիրտը, որը սիրելուց չէր հոգնում. մեռաւ այն անձը, որը մերժել չը գիտէր. հարկաւոր էր ցանկութիւն ունենալ և կարող էիր օգտուել...

ԱՐՍ.—Ո՞հ դժողք։

ՔԱՂ.—Նա սիրում էր, թէ մեծերին և թէ փոքրերին։

ԱՐՍ.—Ո՞հ երկինք, փլիր իմ գլխիս։

ՔԱՂ.—Իմ գլխին ևս։

ԱՐՍ.—(մէկուսի) Ուրեմն...

ՔԱՂ.—Այո, ուրեմն։

ԱՐՍ.—(խիստ նայում է Քաղցածեանին։ Նորից մէկուսի) Եւ այդպէս...

ՔԱՂ.—Այո, և այդպէս։

ԱՐՍ.—(բարկացած) Ի՞նչ էք կապիկի պէս կրկնում ասածներս։

ՔԱՂ.—Ներեցէք, ես... այնպէս։

ԱՐՍ.—Որքան միամիտն ենք եղել մենք, մայրիկ։ Ինչպէս ես, յիմարս, հաւատում էի նրան։

ԱՆԹ.—Ասում էի, որդի, նա քեզ համապատասխան չէ.—դու տարիքով, նա չահել։ Զը լսեցիր ինձ։

ԱՐՍ.—(կատաղի) Ա՜խ, ինչու նա կենդանի չէ։

ՔԱՂ.—(կեղծ վշտացած) Այո՛, ինչու նա կենդանի չէ։

ԱՆԹ.—Տօ դու ձենդ չես կտրի, այ անբեղ, անմուրուք պաժարնի, այ գեղինը դնեմ ես քու բոյը. կորի ես քեզ ասում եմ...

ԱՐՍ.—Ո՛չ, նա չի գնայ այստեղից, մինչև չը խոստովանի բոլորը։ Ասացէք, ուրիշ ո՞վքեր են եղել նրա սիրեկանները ձեզնից բացի։

ՔԱՂ.—(կողմը) Այ քեզ յիմար դրութիւն. ինչ պատասխանեմ սրան ես հիմայ։

ԱՆԹ.—Պապանձուեց լէզուդ.

ՔԱՂ.—Հանգստացէք, մայրիկս։

ԱՆԹ.—Ա՛յ, դու սրիկայ, դեռ համարձակուում ես մայրիկ ասել ինձ։ (հովանոցով ուզում է խփել)

ՔԱՂ.—(կողմը) Ահա քեզ և վարձադրութիւն։ Տո՞ւտ էի ասում ես, որ մարդիկ ապերախտ են։

ԱՐՍ.—Ի՞նչ էք փնթփնթում քնթի տակ։

ՔԱՂ.—Ոչինչ... այնպէս... մտաբերում եմ։

ԱՐՍ.—Դուք դեռ շատ անգամներ կը մտաբերէք։ Ասացէք։

ՔԱՂ.—Ասեմ, ասեմ. միայն թէ մայրիկին հանգստացրէք մի փոքր. ես վախենում եմ։

ԱՆԹ.—Հիմայ վախենում ես, հա՛. իսկ այն ժամանակ, երբ վիկիթներ էիք անում...

ԱՐՍ.—(բարկացած) Դէհ, վերջ տուէք խնդրեմ։

ՔԱՂ.—Այո, լաւ կը լինի որ վերջ տանք. մատաղի շիլեն էլ կարող է սարչել։

ԱՐՍ.—Այդ, համենայն դէպս, ձեզ չի վերաբերում։

ՔԱՂ.—(կողմը) Ինձ չէ վերաբերում. աբա ես էլ ինչի համար եմ այստեղ գլուխ կոտրում։

ԱՐՍ.—Է՛, ասելու էք, թէ ոչ։

ՔԱՂ.—Գիտէք ինչ. էլ միտք չունի իմ ասելը։ Մնաք բարով։ (ուզում է գնալ)

ԱՐՍ.—(բռնելով) Ո՞ւր, դուք այդպէս հեշտութեամբ չէք ազատուի ձեռքիցս։

ՔԱՂ.—Ի՞նչ էք ցանկանում։

ԱՐՍ.—Ես պահանջում եմ, որ դուք տաք նրանց անունները։

ՔԱՂ.—(կողմը) Պահանջում է. ինչպէս է դուր գալիս ձեզ այդ բանը։ (հեքնօրէն) Դուք ինձ ներեցէք, որ ես չպիտի կարողանամ բաւարարել ձեր պահանջը։ Եթէ այդպէս շատ ցանկանում էք իմանալ, ես ձեզ խորհուրդ կը տամ իրենց հարցնել։ Նա ձեզ աւելի ճիշտ տեղեկութիւններ կարող է տալ։

ԱՐՍ.—Ո՞վ, նա։

ՔԱՂ.—(հեքնօրէն) Ցարգելի փափախչի Գրիգորը։

ԱՅՐԻ—Փափախչի Գրիգորը...

ԱՐՍ.—Հա... ուրեմն մէկն էլ նա է եղել։ Ա՛յ անիծուես դու էլ, փափախչի Գրիգորն էլ։

ԱՅՐԻ—Հէնց անիծի քու կնիկը, որ այնպէս բարի պտուղ է եղել։ Դու իմ մարդու յիշատակը ինչի՞ ես անիծում։ Լաւ մարդ էիր, կընկանդ լաւ պահէիր, որ փողոցները չընկնէր։ Քեզ-

պէս քաֆթառ ու քաչալ մարդու կնիկը իհարկէ այնպէս կը լինէր։

ԱՆԹ.—Է՛յ, անզգամ, այդ ում ես քաֆթառ ու քաչալ ասում։ Թէ քու մարդը լաւ մարդ էր ինչո՞ւ էր ուրիշների կանանց հետևից ընկնում։

ԱՑՐԻ—Սուս կաց, քաֆթառ-քուսի, թէ չէ մազերդ պոկ կը տամ։ (դառնալով Քաղցածեանին) Ա՛յ, դու լածիրակ, այդ դու էիր իմ մարդին փչացնողը, հա։ Ես էլ եմ ասում, ինչու է մարդս ամեն գիշեր ուշ տուն գալիս։ Լաւ ես ընկել ճանկս, էլ չես ազատուիլ։ (հարձակւում է Քաղցածեանի վերայ)

ՔԱՂ.—(Սրսէնին) Օգնեցէք խնդրեմ, այս կինը խենթ է երևում։

ԱՐՍ.—Ե՞ս քեզ օգնեմ, փուչ կենդանի։ (Թակում է։ Այրին եւ Անթառանն էլ միանում են)։

ՔԱՂ.—Օգնեցէք, օգնեցէք, սպանեցին։

ՏԵՍԻԼ 9.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊԱՀԱՊԱՆ

ՊԱՀ.—Այս ինչ է, ինչ աղմուկ է։

ՔԱՂ.—Օգնեցէք, սպանեցին։

ՊԱՀ.—Հանդարդուէք։ Մեղք է, ինչպէս կարելի է գերեզմանատանը կռիւ անել։ (ապատում է Քաղցածեանին)։

ՔԱՂ.—(պահապանին) Շնորհակալ եմ բարեկամ. լաւ քելեխ կերցրին ինձ։

Վ Ա Ր Ա Գ Ի Ն Յ Ր

ԳՐԱԴԱՐԱՆ

[404]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

A
27427